

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼՏԱՐԻԱ

Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տոյար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոթացնու տողը
20 տակդիւ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵԻ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս
չեմ տրուիր

ԼՈՅՍ ՏԵՍԱՐ

Թ Ի Ա Պ Ա Ր Տ Ի

Ա. հատորը. իսկ Բ. հատորին՝ որ առաջինին գրեթէ կրկին
մեծորակիւ կոչուեալ, 200 երեսէն աւելին տպագրուած է:

ԵՐԿՈՒ ՀԱՏԱՐԻՆ ԳԻՆԸ 2 ՖՐԱՆԿ

Բ. հատորին յրանաչին վերջ գինը պիտի աւելցնենք. քայց
որով որ կանուխ եւ ածան ստանալ կոչուեալ, այժմէն 2 ֆրանք
մեզ դրկելու եւ, վստահ ըլլալով թէ Առաջին հատորը անմի-
ջապէս կստանան եւ իւր աշ աշխատանք ունի:

10 օրինակի դրամ դրկողը 11 օրինակ կստանալ:

ԲԱՐԻՁԻ ՄԻԹԻՆԿԸ

Հայաստանի ու Մակեդոնիոյ
ժողովուրդներուն ինչպատ ծա-
նուցուած հաւաքուած տեղի ունե-
ցաւ կիրակի օր Բարիձի մէջ Շաբո-
տ'Օ թատերասրահին մէջ, ընդ հա-
խաքահալութեամբ երեսփոխան Մ.
Տ'Էթուրնէլ տը Դոնաթիանի. սրահը
ամբողջովին լեցուն էր:

Նախագահը կարգաց իրեն ուղ-
ղուած համակրութեան նամակ-
ներ, որոնք զրկուած էին գրական,
գիտական, կրօնական եւ քաղա-
քական աշխարհի զանազան բարձր
անձնաւորութիւններու կողմէ:

Արտաքին գործոց նախկին նա-
խարար եւ այժմ Ժերակուտական
Մ. Պերթըլօ այսպէս կը գրէր.

Բոլոր սրտովս ու ամենայն հաճու-
թեամբ կը մասնակցեմ Հայաստանի
ու Մակեդոնիոյ հարստահարուած ու
խողովորուած ժողովուրդներուն ի
նչպատ ձեր կազմակերպած ցոյցին:
Ժամանակն է որ Եւրոպան միջամտէ,
յանուն քաղաքակրթութեան եւ մար-
դասիրութեան, վերջ տալու համար
ջարդերու եւ վայրենութեանց այն
տեսարաններուն, որոնք միջին դարու
բարբարոսութիւնը կը յիշեցնեն եւ ու-
րոնք կանաչատուեն մեր դարը:

Պէտք է որ հանրային կարծիքի
աղաղակը պարտաւորէ կառավարու-
թիւնները որպէս զի մէկ կողմ դնեն
զիրենք բաժնով մասնաւոր չանհրաժե-
կան ու անդիմադրելի գործունէութիւն
մը երեւան գալ, ինչպէս որ աստեօք
եղաւ Յունաստանի ինչպատ եւ նոյն-
պէս մեր օրերուն մէջ Պուլկարիոյ հա-
մար:

Նախագահը կարգաց ի մէջ աշ-
խարհի Հայր Շարմիթանի մէկ նա-
մակը, որ մասնաւորապէս Ֆրան-
սայի վրայ պարտք կը դնէր որ
իր համբաւին եւ անցեալի մէջ ու-
նեցած դերին համեմատ իր պարտ-
քը կատարէ Հայաստանի եւ Մա-
կեդոնիոյ համար, եւ այնպատա-
կաւ դիմում ըլլալ Պերթըլի դաշ-
նագիրը ստորագրող պետութեանց
ու կը վերջացնէր այսպէս.

Եթէ ուրիշ ազգեր հրաժարին իրենց
պարտքէն, Ֆրանսա չկրնար իր ստորա-
գրութեան դէմ բողոքելու տեղի տալ:
Մ. Էթմանուէլ տէր Էսսառ. իր
նամակին մէջ կըսէր.

Ժամանակն է որ աշխարհի որ Սուլ-
թանին զգուշի բարբարոսութիւնը
ճնշէ իր հպատակ ժողովրդաց վրայ,
եւայլն:

Մ. Լուի Հափէթ կըսէր.

Արեւելքի բարբարոսութիւնը Արեւ-
մուտքի ամօթն է, եւ ես իմ մասին,
այդ ամօթը կըզգամ ոչ միայն իբր
ֆրանսացի այլ իբրեւ աշխարհաքաղա-
քացի մը:

Ահաւասիկ օրակարգը որ կան-
խաւ որոշուած էր ժողովին ներ-
կայացնել.

Ամէն գաղափարի պատկանող հինգ
հազար Ֆրանսացիներ 1903 փետրուար
15ին հաւաքուած Բարիձի Շաբո-
տ'Օ թատերասրահին մէջ,

Նկատելով Հայաստանի եւ Մակե-
դոնիոյ ժողովրդոց տառապագին կա-
ցութիւնը եւ զէպքերու յարաճուն
ծանրակշռութիւնը,

Նկատելով թէ այս կացութիւնը
հանրութեան խղճին բնո մըն է եւ
ընդհանուր խաղաղութեան համար
վտանգ մը,

Նկատելով որ միմիայն Պերթըլի
դաշնագրին գործադրութիւնը, ինչպէս

Հայաստանի նոյնպէս ալ Մակեդոնիոյ
մէջ, կրնայ վերջ դնել իրաց այս
անհանդուրժելի կացութեան,

Նկատելով այն ստիպողական պար-
տականութիւնները որ Պերթըլի դաշ-
նագիրը կը դնէ բոլոր գայն մտորա-
գրողներուն վրայ,

Փափաք կը յայտնէ որ Ֆրանսական
կառավարութիւնը ազգացի կերպով
չարժի. ձեռք բերելու համար վերջա-
պէս գործադրութիւնը Պերթըլի դաշ-
նագրին 23 եւ 61 յօդուածներուն, 1895
մայիս 11ի յիշատակագրին համաձայն,
եւ զազգեցնել տալու համար այն
խիստ երկար շարքը ոճիւրներուն որք
կը գործունին Թուրքիոյ մէջ մարդ-
կութեան դէմ, առանց խտրութեան
ազգի ու կրօնի:

ՄԱՐՍԻԼԻՈՅ
ՇԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Ամէն կողմէ հասած լուրերը, եւ
մասնաւորապէս այս օրերս Մարսէլէն
Հոնտոն ժամանող 15--20 Հայ գաղթա-
կաններուն զարհուրելի յայտնութիւն-
ները պարտականութիւն կը դնեն
վրաս, որպէս զի հրապարակաւ ար-
տասանմանի եւ մասնաւոր Ամերիկայի
հայոց ուշադրութիւնը հրաբերմ,
Մարսէլ հասնող զգալի հայրենակից-
ներուն շահագործութեւն եւ անխղճ-
ութիւն կողոպտութեւն մասին, հայ սըմ-
սարներուն եւ պանդոկապետին ձեռ-
քէն: Այս գրութեամբս կը յուսամ
ու կը հաւատամ մասնաւոր թէ՛ մաս-
նաւորապէս Ամերիկայի հայերը՝ չու-
տափոյթ քայլ մը պիտի ուզեն առ-
նել, մէկ քանի անբարոյական արա-
րածներուն ճանկէն ազատելու Մարսէլ
հասնող, չուարեալ ու երկրին անձա-
նօթ մեր գաղթական-ճամբորդները:

Քաջը փոթորկալից օրը կը սիրէ
րսած են, ճիշդ այսպէս ալ, հայու-
թիւնը զարնող սոսկալի աղէտներէն
վերջ, արտասանման թափուող գաղ-
թականներուն մէջ՝ գտնուեցան մար-
դակերպ գայլեր՝ որոնք անամօթա-
բար ու առանց խղճի խայթի, օգ-
տուելու ուզեցին հայութեան ձախող
անստոյգ վիճակէն, ու իրենց անպէտ
կաշիին գոյութիւնը ապահովցնելու
մտահոգութեամբ, էն անարգ ու էն
անպատուաբեր միջոցները իրենց նպա-
տակ ընտրեցին: Ու հայութեան նե-
րողամիտ վարմունքը զէպի այդ խա-
չագողները, կարծես քաջալերանք մը
ըլլալ, որպէս զի անոնք աւելի պիտի
փարին իրենց տխուր գործին:

Պատուելիներ, տաճկախօս պատուե-
լիներ մասնաւոր, որոնք ինքզինք-
նին հայ ցեղին աղէտները նկարագրե-
լու նուիրած միայն, Անգլիոյ ու Ա-

մերիկայի մէջ ահագին դրամներ կը
հաւաքեն, բարեգործութեան դիմակին
տակ, զանազան միջիններու մէջ
արեւելեան ձեռագործներ կը ծախեն,
որոնց բարեմիտ անգլիացիները ուս մե-
րիկացիները առատօրէն իրենց քսակը
կը նուիրեն, հաստատ համոզումով թէ՛
իրենց ըրած այդ բարիքը իրօք Հա-
յաստանի խղճներուն ձեռքը պիտի
հասնի: Մինչդեռ այդ խաչագող պատ-
ուելիները, հայ խղճներուն անուշովը
հաւաքուած դրամներովը, առգին ա-
հագին տուններ ծախու կառնեն, հա-
զարաւոր ոսկիներ գրամատուն կը
դնեն, միշտ Գիւստասի անունը մրմա-
լով, իշխաններու պէս կեանք կը վա-
րեն: Արդէն այդ խաչագող եւ ազգային
աղէտները շահագործող «Գիւստաս-
եայ» պատուելիներուն մասին շատ ան-
գամներ գրուած ըլլալով, չեմ ուզեր
հոս աւելի ծանրանալ անոնց վրայ,
քանի որ նպատակս այս անգամ անոնց
մասին գրելն է:

Կրօնաւոր խաչագողներուն հետ սա-
կայն՝ ունինք նաեւ աշխարհական խա-
չագողներ ալ, ու այս վերջինները
կարծեմ աւելի վտանգաւոր ու աւելի
հրէշներ են: Առաջինները ազգին կա-
ցութիւնը կը շահագործեն, իսկ վեր-
ջինները նոյնիսկ իրենց զօրախտ ազ-
գակիցները կը կողոպտեն, ու շատ
անգամներ կը յանդգնին մինչեւ ան-
գամ անոնց ընտանեկան անաղարտ
պատիւը սրբապղծել:

Աշխարհական խաչագողներուն մէջ՝
Մարսիլիոյ հայ սըմսարները եւ պան-
դոկապետը կը գերազանցեն ուրիշ կող-
մեր գտնուող կողոպտիչները: Ուստի
կարծէ՛ ու անհրաժեշտ պէտք յըն է
որ այդ մարդիկները հրապարակաւ
ճանչցնենք ալ եւս հասարակութեան,
իրենց իսկական անուններովը, եւ
ժողովուրդին անողոր զատաւճոյն
յանձնենք, քանի որ մինչեւ հիմա ե-
ղած ուղղակի կամ անուղղակի հրա-
տարակութիւնները երբեք աղաքած ըլ-
լալ չի թուիր անոնց վրայ:

Յակոբ Քարաթէքեան, Կարապետ
Բագրատունի եւ Ղազար անուն անձերը
Մարսիլիոյ սըմսարներն են, այսինքն
հոն ժամանող ճամբորդ հայերուն տոմ-
սակ գնեղներն եւ առաջնորդները:
Այս պարոնները, իրենց հետ ունե-
նալով պանդոկապետ Յակոբ Պապա-
եանը՝ գրեթէ բնակութիւն մըն են
կազմած, որպէս զի մշտնջենական կո-
ղոպտիչներ մնան, Մարսէլէն Ամե-
րիկա ճամբորդող խեղճ ու կրակ հայե-
րուն:

Շարաթ չըլլար որ, անպատճառ
100—150 հայեր Մարսէլ չի գան Ա-
մերիկա երթալու համար. երբ այդ
տառապեալները նաւամատոյց կելլեն
ահաւասիկ՝ իրենց առջեւ կը տնկուին
Մարսիլիոյ գիշատիչ ազաւանները. ա-

սոնք նորեկ չուարեալները առնելով, կառավարողին հայկական պանդոկը, աւելի լաւ է ըսել հայկական սպանդանոցը: Ու ահա ասկէ յետոյ է որ կսկսի ահաւելի տաւոր:

Այժմ խօսքը գաղթականներուն ձգեմք, որոնք հոգ, այդ պանդոկին մէջ բնակած են օրերով եւ տեսած են այն բոլոր գաղանային անխղճութիւնները որոնք ի գործ կը դրուին ճամբորդներու վրայ:

Երբ ճամբորդ հայերը պանդոկը կը տեղաւորուին, սըմսարներէն մին կսկսի մէկիկ մէկիկ այդ գաղթականները իր սենեակը կանչել. ու հարցաքննել դատաւորի մը պէս: Երբ ճամբորդը կը յայտնէ թէ՛ իր քովը պէտք եղածին չափ ստակ չունի, եւ պէտք է գրէ Ամերիկա որ դրամ զրուկներ բարեկամները, սըմսարին դէմքը կը խօսուի, իրեն մեծկակ պատու մը չեղլիւուն համար, ու կը հրամայէ որ անմիջապէս հեռագրէ Ամերիկա, ու յետոյ, առջին պանդոկապետին դառնալով, «Ես կոր, առ աս մարդը ու տեղ մը դիր»: Կրնայ ըլլալ որ Ամերիկայէն պատրաստ տոմսակ դուրսի, ճամբորդներուն ազգականներէն, սա կայն քանի որ սըմսարները չափ մը չի պիտի ունենան անկէ, զիտմամբ ոչ մէկ ճամբայ չեն ցոյց տար ճամբորդին եւ սպասել կուտան ամիսներով մինչեւ որ իր քովի եղած գրամներն ալ կը սպառին ու խզմալի վիճակի մը մէջ կը մնայ: Եւ անգամ չուարեալ հայը նորէն կը ստիպուի Ամերիկա գրել, ու նորէն հնչուն դրամ խնդրել: Կրնայ ըլլալ որ Ամերիկա գտնուող հայու մը նշանածը կամ կինը երկրէն Մարսէլ կուգայ, հայ սըմսարները եւ կամ պանդոկապետը, գրամի մը փոխարէն կը յաջողին մէկուն նշանածը ուրիշի մը տալ, եւ կամ ուրիշի մը կինը իրենք բռնաբարել: Ծամբորդներուն համար զգեստ եւ կամ ուրիշ գոյքեր առնելով, մէկին տեղ տալը երբեմն կը հաշուեն: Երբ ճամբորդի մը համար Ամերիկայէն դրամ կուգայ սըմսարներուն, տէրովը չեն իմացներ մինչեւ այն օրը որ շոգենաւը պիտի մեկնի, որովհետեւ այդպէսով խեղճ ճամբորդները ածապարանքի բերելով, կրնեն ինչ որ ի-

րենց քարացած խիղճը կը թույլարէ: Պանդոկին ազատութիւնը անկարելի է որ գրիչով նկարագրուի: 30-40 հոգի մէկ սենեակի մը մէջ գետնի վրայ կը պառկին, ճամբորդները կը պատմեն թէ՛ ո՞րքա կը լողայ հոգ: Կարծեքեքեք կապտակէ այն երիտասարդը որ զփոփոթութիւն ու բողոք կը բառնայ, պանդոկապետին տնտեսական ընթացքին դէմ որ կուենեայ երբեմն հայ կիներուն նկատմամբ:

Կրնայ ըլլալ որ երբեմն հազիւ տոմսակ մը, գնելու չափ ստակ զրուի ճամբորդին, բայց սըմսարները եւ պանդոկապետը իրենց պախճիշները չի կոխնջնելու համար, կը յետաձգեն ճամբորդին մեկնումը, ու կը հրամայեն ամբողջ պէտք է գրէ իր ազգականին որ քիչ մը եւս դրամ զրուի: Իրենց այս քստմեծի արարքով ճամբորդը կը ստիպուի 15 օր եւս պարապ տեղը սպասել:


Այս իրողութիւնները որ յայտնեցի ու եւ ի վիճաքանութիւն չեն վերցնել, գաղթականները իրենց գառնացած սրտովը ու վրէժխնդիր ոգով պատմած են ինծի եւ միեւնոյն ժամանակ խնդրած որ հասարակութեան հրապարակաւ իմացնեմ, որպէս զի այս խիստ անբարոյական գործը վերջացնելու ճար մը գտնուի: Եթէ ապագային ու եւ ճախորդ պաշտպանողութեան կոկոսներն ալ երեւան գան՝ Մարսիլոյ հայ սըմսարները եւ պանդոկապետին կողմէ, անոնց ալ փաստացի կերպով պատասխանելու պատրաստ եմ:

Փափաքելի է որ այս շահատակութեանց առաջին առնելու համար միջոցներ ձեռք առնուին:

ԱՐՇԱՄ ԿԱՐԿՈՒՏԵԱՆ

Լոնտոն, 11 Փետրուար 1902

Դիւս. Խմբ. — Տարիներէ ի վեր Մարսիլոյ մէջ լոկ քահանայութեամբ զբաղող Եւրոպոյ առեւտրական Առաջնորդ Սրբազանը արդեօք ի՞նչու ցարդ անտարբեր գտնուած է: Միթէ իր պարտականութեանց չափէն զո՞րք է պանդոկապետ ճամբորդներով հետաքրքրուիլը:



ՕՐՈՒՆԱՆ ԲԱՆԱԲԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

«ՏԵՅԼԻ ԳՐՈՆԻՔԻ»-Ի ԽՄԲԱԳՈՒԿԱՆԸ

Անգլիոյ Նյուտոնի մեծ օրաթերթը, Տէյլի Գրոնիքը Մակեդոնիոյ խնդիրները ճշտութեամբ մասնաւոր խմբագրականի մը մէջ կը գրէ:

Հարաւ-Արեւմտեան Եւրոպայի մէջ ապագան մեծապէս ծանր ըլլալ կը շարունակէ: Թուրքին դատապարտելի վարչութիւնը, ինչպէս Մ. Պապ իրաւամբ գայն կանուանէր, գլխաւոր պատճառն է այն խառնակեալ կացութեանց որոնք մեզի ժամանակին կոտորածներու ու կրակներու առջեւ գրին: Ոչ ոք կուրանայ թէ Մակեդոնիայ յոռի կերպով կը կառավարուի: Եւրոպայի մէջ իւրաքանչիւր դիւանատուն անցեալ տարւոյ վերջին քառորդին մէջ պատրաստեց Մակեդոնիոյ համար մեծ քանակութեամբ բարեկարգմանց ծրագիրներ: Բայց ասոնց ոչ մէկը արդէն չտուաւ: Բարեկարգութիւնները մերժելը ապստամբութիւն բերելու յարմարագոյն միջոցն է: Կան Մակեդոնական կոմիտէներ, ինչպէս կային Հայկական կոմիտէներ: Երկու պարագաներու մէջ ալ քաղաքական շարժումները չեն պակսիր: Բայց բոլոր քաղաքական շարժումները ետեւ գոյութիւն ունի թրքական յոռի վարչութիւնը, որը խառնակութեան գերագոյն շարժումներն ու սկիզբն է: անցեալ տարիներու իւրաքանչիւր ձմեռը մեզի կիմառնէին թէ գարնան մէջ ապստամբութիւն տեղի պիտի ունենայ: Գուշակութիւնները այնքան յաճախակի եղան որ ունեւ գուցէ մտածեն տակաւին երկար ատեն սպասել: Բայց այսպէս մտածելը մեծ սխալ մըն է: Ուշ կամ կանուխ տեղի պիտի ունենայ կամ բարենորոգում, կամ խառնակութիւն: Այս ձմեռ գուշակութիւնները աւելի լուրջ էին քան ուրիշ հետաւոր անցեալի մը մէջ: Երկրորդական խմբակներ անցան պոլիկար սահմանագիծէն ու թէեւ ստուգութեամբ բան մը հաս-

տատելու համար մանրամասնութիւնները պակսին, աղէկ պատճառներ կան կարծելու թէ այս անգամ Թրքական զօրքերը դիմադրութիւն տեսան, ու գոնէ հաւանական է որ լուրջ կուրուստներ տեղի ունեցան: Երկրորդ, խմբակներն ալ վարդէջուրի վրայ չեն որ իրենց արշաւանքը կրնեն բռնութիւնը բռնութիւնը կը ծնի:

Գրիտանիայ ժողովուրդները հարստահարելը զօրախտապէս սովորական վիճակ մըն է: Երբ մեծ խառնակութիւն մը ժողովուրդները դիմադրութեան հարկադրէ, անոնց վիճակը ալ աւելի կը ծանրանայ: Սուլթանը նահապետի մը խառնակ վիճակին մէջ չքմեղանք մը կը գտնէ գուցէ — նաեւ իր տեսակէտով արդարացում մը — բանակ մը շարժան մէջ գնելու համար: Այս առթիւ տրուած վերջին տեղեկութիւնները Դրան կողմէ պաշտօնապէս հերքուեցան: Բայց այս հերքումն ալ հրամանի արդիւնքն է: Եթէ Սուլթանի դէմ անմիջական միջոցներ ձեռք չառնուին, վերջին աղէտքը կրնայ դիւրաւ տարածուիլ: Անգամ մըն ալ Հայաստանի սարսափներն ու կոտորածները Մակեդոնիոյ մէջ կրնան կրկնուիլ: Կայ սարսափելի տեսակէտ մը, որ զօրախտապէս բոլորովն, աւաղ, անհաւանական ալ չէ: Եւրոպայի անտարբերութիւնը ու Սուլթանին անպատիւ մնալը կըրնան գործերը խառնաշփոխ: Սուլթանը հայերուն նկատմամբ իր կամքը կը կատարէ: Ինչպէս Եւրոպան կը մնայ սայսափած գուցէ, այլ խաղաղ: Ի՞նչ կրնայ բացայտակարէս վստահ ըլլալ թէ այս պատմութիւնը երկրորդ անգամ չը կրնայ կրկնուիլ: Ներկայ տապալակութիւնը ուրիշ ելք հոգի է:

Արդի պարագային մէջ սակայն, լատագոյն պարագայի մը համար պատճառներ կան: Ինչպէս գային նախանձառութիւնները որոնք քանի մը տարի ստալ Եւրոպան կուրամալուծէին, այժմ խաղաղացած կերեւին: Պաշտօնական թերակողմին մէջ երկու ամենէն մօտ պիտուի թիւնները Աւստրիան ու Ռուսիան են: Անոնք, վերջերս, յանգեցան մասնաւոր համաձայնութեան մը: Ինչպէս որ 1897ին ussawfուսն պահելու համար ընդհա-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(52)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԲԱՆՏԻՆ ՀՐԴԵՂԸ

— Կրակ կա՛յ... կրակ կա՛յ... պողաք ձայն մը: Վժխուեցնելու մէջ, աղաղակներու մէջ... վերջապէս զղրելիներու մէջ ահաւելի իրարանցում մըն ալ տիրեց...:

Հրդեհը բռնտին կից էր... հետեւաբար բոցը լուսամուտներէն սկսած էր ներս թափանցել:

Գիշերուան մութին մէջ բռնտին դուռը յանկարծ բացուեցաւ: ու բռնտարեւոյններն ամէնքն ալ դուրս թափուեցան:

Ոստիկանութիւնը փուռ տեղ չորս կողմէն շրջապէս տակ առնել ուզեց բռնտարեւոյնները: — անոնք փախած էին:

Ազատուած էր նաեւ Պատրիկ...:

ԿՈՏՈՐԱՅԻ ԶԱՅԷՆ ԵՒ

ԿՈՒՍԱԳՅԱՆԱՆՆԵՐՈՒ ՄԻԱՅՈՒՄ

Շաբիր փաշա, ինչ օրումն մեջ, պատրաստած էր կոտորածներու սեւ ծրագիրը: Վանի ամրոցը նահանգը զինուորական ահեղ շղթայի մը տակ առնուած էր:

Արդէն, Սասունի ջարդը, Կարինի կոտորածը, մէկ խօսքով՝ Հայաստանի ամեն մասերու մէջ թափուած արիւնը, գործուած քստմեծի ոճիւրները սարսուռ ազդած էին:

Կոտորածի ձայնը կը հնչէր... դրեթէ մահուան անապոյտի զօղանքի մը պէս:

Հայութեան անողոք ճակատագիրը հրէշային ձեւերով կը մատնուէր:

Շաբիր փաշա ապստամբութեան թելադրած էր բոլոր քուրս ցեղապետներն, որոնք իրենց գունդերով վան քաղաքը կը թափուէին: Այդպիսով սկսեալ ինչուան «Մանց» կոչուած արուարձանը, պաշտօնուած էր այդ վարդին ու արիւնկալ քուրսերով: Զինուորապետ փաշայի մէկ հրամանին կը սպասէին, որպէս զի քանդէին, աւելին ու արիւնի մէջ թողէին ամբողջ նահանգը:

Սակայն Բարձրագոյն Դուռը հեռագրով մը իմացուց Շաբիր փաշային որ Կ. Պոլիս վերադառնայ: Արիւն ծանր եկաւ նենգաւոր փաշային, որովհետեւ չկրնար իր աչքով տեսնել Մեծ-Ոճրագործ Սուլթանին ծրագիրը:

Երբ Շաբիր փաշան իր ոտքը կտրեց վանէն, ապստամբութեան թելադրուած քուրսերը պարապ ետ

չդառնալու համար աւարի ու թաւախ սկսան եւ ամրոցը թխտար, ամրոցը Հայոց Զոր, ամրոցը Շասախ քանդեցին ու կողպտեցին:

Մտաւորապէս ութ տարեկան էր վեր գոյութիւն ունեցող կուսակցական երկպառակութիւնը մէկիկ թողուցած էր իր անաւոր երեւոյթը: Վստայը դիտած էր ու կը պատրաստուէր իր կուրծքը տալու...:

Կուսակցական բաժանումը, զոր յիշեցինք, Երեք ճիւղի բաժնուած էր: 1) Սրմնական: 2) Հնչակեան: 3) Դրօշակեան:

Արմենականներու գլուխը կը գտնուէր Մկրտիչ Աւետիսեան, Հնչակեաններու գլուխը կը մնար Մարտիկ, իսկ Դրօշակեաններու գլուխը կը գտնուէր Պետո:

Ահա՛ այս երեք պիտիւրու մէջ բաժնուած էր ա՛յն ահեղ ուժը, որմէ կը վախնար թուրք կառավարութիւնը:

Ցաւ է մեզ խոստովանելու թէ կուսակցական բաժանումը մեծ ու ազնաւոր հարուած մը եղաւ վանայ նահանգին համար, որովհետեւ՝ երբ ուժը մէկը միւսին դէմ գտնուող ձեւերով մէջ ջլատուեցաւ, երբ վախառուն, հարուածը, վատ կղերն ու խառնա իրենց դաւադրական գլուխը վերցուցին ճգնաժամ ծծի մը պէս, թուրք կառավարութիւնը չունչ առաւ ու այդ ուժին ամբողջութիւնը ոչնչացնելու համար ճակեցաւ:

Թէպէտ եւ վանական, ներսէս Արժալուն ու Պատրիկ անոնց մէջ մասն, համոզել ջանացին ու ապագայ բոլոր աղէտները ցոյց տուին, սակայն անօգուտ եղաւ: Ամէն մէկը զաղափար մը ունէր, սկզբ-

նուր համաձայնութիւն մը գոյացուցին. երկու ամիս առաջ մենք կիմացնէինք Կոմս Լամարտի Գլխավորութեամբ իր միջնու գոյացած համաձայնութիւնը. անոնք կը հասկնան թէ ժամանակը եկաւ ընելու աւելի բան մը քան այն քաղաքականութիւնը որով կըսեն թէ Հարաւ-Արեւմտեան Եւրոպայի խաղաղութիւնը պիտի երաշխաւորուի. անոնք որոշեցին խմբագրել Մակեդոնիոյ համար բարեկարգմանց ծրագիր մը ու Սուլթանը պարտաւորել որ զայն ընդունի. մեծագէտ ցաւալի է որ ծրագիրը չէ հրատարակուած ու Աւստրո-Ռուս համաձայնութիւնը աւելի երազ գործունէութիւն մը ցոյց չի տար. Գուցէ ժամանակ վատնուեցաւ միւս պետութեանց գործակցութեան ալ երաշխաւորելու համար. իրական համաձայնութեան մը կարելիութիւնը՝ աւելի նպաստաւոր ըլլալ կը թուի. քան ուրիշ տեսնենք:

Գիշ ատեն առաջ հրատարակուած ֆրանսերէն Դեղին Գիրքէն պայծառապէս կը տեսնուի թէ՛ այժմ Ֆրանսա Ռուսիոյ հետ համաձայն է. արդարեւ, Մ. Տէլքսսէ կը թուի ունեցած ըլլալ պատուաբեր ու կորովի նսխաձեռնութիւնը՝ պնդելու որ կարեւոր միջոցներ ձեռք առնուին չփոթութեանց առաջը բարեկարգութիւններով առնելու համար. Իսպաիա կը թուի Աւստրիոյ հետ համաձայն ըլլալ. Գերմանիա, կըսեն, չեզոք կը մնայ. քիչ մը երկգիծի խօսք՝ որը սակայն, կը յուսանք թէ այս պահուս իր յատուկ ու բովանդակ առումովը կրնայ առնուիլ. Ինչ բաներ չըսին աւստրո-ռուս համաձայնութեան մէջ բռնութեան գիծերու համար ու եւ ի նախա-տեսութիւն չըլլալուն համար. խնդիրը նոյն ժայռին վրայ է որուն վերաբերութեամբ ուրիշ համաձայնութիւն մը ազդեցիկ փոխուեցաւ. հիմակ սակայն երկու պետութիւնները կը թուին Սուլթանը պարտաւորել որ իրենց ծրագիրը ընդունի. անոնք անվիճելիօրէն կրնան յեղափոխական շարժումը ունենցնել. սակայն եղածը որպէս զի տեական ըլլայ, հարկ է որ բարե-նորոգմանց ծրագիրը ըլլայ ապահով ու լայն, ու անոր արդար գործադ-

րութիւնը ձեռք ձգուի. հողագործա-կան տուրքը կրնայ ցնցուիլ. տեղային պաշտօնեաներն կանոնաւորաբար ամսավճար ստանալու են. պնդելու են որ Մակեդոնիոյ եկամուտները Մակեդոնիոյ պէտքերուն սահմանուին. այս կերպ բարեկարգութեան մը երաշխաւորութիւնը ունենալու համար, հարկ էր նաեւ որ Պետութիւնները ձայն ունենային գաւառային կառավարիչին անուանումին մէջը—ընտրուած Եւրոպայի չեզոք փոքր պետութեանց հպատակներուն մէջէն—ու երկիրը տարտաքին քննիչներու արշաւանքէն ապահովէին. Եթէ այս կերպ բարեկարգութիւններ տեղի ունենային, ու եթէ նոյն ատեն պուլկար խմբակներու գործունէութեան առաջին ալ առնուէր, անգործութեան չըլլան մը կրնար յաջորդել այժմու վտանգաւոր անհանգստութեանց վիճակին:

Ինչ է սակայն, այս ծանր տագնապին մէջ, Մեծն Բրիտանիոյ քաղաքականութիւնը. Մերձագոյն Արեւելքի մէջ Բրիտանիոյ ազդեցութիւնը վերջին տարիներ կանոնաւորաբար նուազեցաւ, ու անոր շահերը կը թուին չըլլալ այնքան մեծ, որքան ատեն մը, բայց, Բրիտանիոյ շահերը ըլլան մեծ կամ փոքր, անոնք ապահովապէս, ինչպէս Մ. Պոպս կըսէր, «չան մը չունին թրքական խառնակութեանց տեւականութեան մէջ»: Իբր Պոպսին գաշնագիրը ստորագրող մը, մեր երկիրը իրաւունք ու պարտականութիւն ունի այս գործին մէջ իր ձայնը լսելի ընել տալ. կը յուսանք թէ այդ ձայնը կը լսուի ու անիկա յարասեօրէն կը բարձրանայ ի նպաստ չաւ կառավարութեան մը, լորտ Լանստոնին նախորդ փորձեց կազմել ու վարել եւրոպական համաձայնութիւն մը՝ Հայաստանի օգնութեան հասնելու համար. Անիկա սակայն բոլորովին անյաջողութեան մատնուեցաւ, զիստ որաբար Ռուսիոյ խափառարար վարժունքին հանդէպ. Կենթաբերնք թէ լորտ Սոլդպէրի յաջորդը ալ նոյն գիրքին մէջ չը գրուին. Իր մէկ քանի շաբաթ առաջ խմբագրուեցաւ թէ Անգլիոյ դեսպանը Սուլթանին վրայ բարենորոգմանց ծրագիր մը համար ճնշում կը բանե-

ցնէ: Իւրաքանչիւր դեսպանատուն անշուշտ իր ծրագիրը ունի. բայց երբ աւստրո-ռուս ծրագիրը ներկայացուի, մեր դեսպանը պարտաւոր է ազդեցական անոր ոյժ տալ. ու կը կարծենք զիտնալ որ Լոնտոնէն ապահովութիւն տրուեցաւ թէ Ռուսիա ու Աւստրիա ի գէմս Մեծն Բրիտանիոյ պիտի գրանեն փութալան ու բարեացակամ զաջ նակից մը, երբ խնդիրը վերաբերի ծրագրի մը, որը կրնար Մակեդոնիոյ ժողովուրդները Թուրքին նշաւակելի վարչութեանէն ազատել:

(Տեյլի Գրովի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Հայրապետական կոնդակ մը Արքեպիսկոպոսութեան արտիճան կը շնորհէ Պոլսոյ Կրօն. Ժողովոյ դեր-առնեալութեամբ Տ. Վահրամ Ե. պիսկոպոս Մանկունիի, ու Նիկոյի ղեկավար Թ. Ստեփանոս Ե. Ստեփանի:

— Վանայ մէջ կը պատրաստուին յառաջիկայ օգոստոս 14ին Երամեան վարժարանի հիմնարկութեան յորեքանը կատարել. յանձնարարութեամբ մը՝ Բողոքական Երամեան Նախկին սաներին ու տեղւոյն գաւառական վարչութեան անդամներէն, կայսրատի հանգա-նակութեան մը ձեռնարկելով՝ դպրոցական պատշաճ չէնք մը գնել ու աղագէտով կրթարանին տեւականութիւնը ապահովել:

— Պոլսական թերթ մը կը գրէ. «Չմուռնիոյ առաջնորդ Տ. Մելքիսեդէկ արքեպ. մօտեցաւ պիտի հրաժարի, և Պ. Մանգաշէֆ զայն իր սուրբ հրաւիրած է. Գարնան սրբազանին հիշատակը իզիւր երթալով պիտի տա՛ի զինքը»:

— Ս. Էջմիածնի մէջ սկսած են իր տպագրութեամբ, նոր ձեռա-

գիր ու գրչագիր օրինակներու բազմաթիւութեամբ ու քննութեամբ հրապարակ հանել Ստեփանեան-Ն. Դանդոյի գրքին առաջին 24 գլուխները արդէն տպագրուած են:

— Պաշտօնի Պատ. փոխանորդ Տ. Գ. Վ. Ստեփանեան Երուսաղէմի վանքին Լուսարարապետ ընտրուած ըլլալով, տեղւոյն Գաղ. Ժողովը Պատրիարքարանէ խնդրած է որ Տաւադոսի տեսուչ Տ. Սերովբէ Վ. Սամուէլեան Պաշտօնի փոխանորդ կարգուի:

— Յուլիան 17ին Պոսղոնի մէջ Սարաճեան եպիսկոպոսական հոգեւորական հանդէս մը տեղի ունեցած է. հանգանակուած է 163 տուր. Չայն Հայրենեացի խմբագրութիւնը 10 տուր նուիրած է:

Նոյնպէս Ամերիկայի ուրիշ քաղաքներուն մէջ ալ անրդհատ հանգանակութեանց կը ձեռնարկեն, առանց կուսակցական խտրութեանց:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍՏ

ՏԱՆԿԱՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ

Վառնա

	Տր. ՍՈ.
Տ. Յովհաննէս Գողթեան	2.—
» Կարապետ Պէնեան	1.—
» Կարապետ Զիչէկյան	— 50
» Կարապետ Պանչեան	— 50
» Թաւմիզ Վարդան	— 50
» Օննիկ Բարսեղեան	1.—
Գարահանքի մէջ աշխատող հայ գաղթականներէն	15.—
	20. 50

բունք մը ունէր, նպատակ մը ունէր, հետեւաբար ծրագիր մը ունէր զոր մէջտեղ կը գնէին ու անոր օգուտներուն ու կիրառութեանց վրայ խօսելով կը մտնային թէ կրնայ առած չէնք մը մէջ կը գրու-նուէին:

Աս միջոցներուն վանական իր զինակիր խումբը յանձնած էր Վաղգէնին. իսկ Պատրիկի վէրքերը բոլորովին բռնուած չըլլալով, Արարուց թաղին մէջ ապահով տուն մը ապաստանած էր ան:

Վաղգէնի խումբը թիմաբայ զեղերը պաշտպանելու համար զրկուած էր. իսկ ամբողջ Հայոց Զորն ու Շատախը կը մնային Ներսէս Արքեպիսկոպոսին:

Ըսինք թէ փառաբեր տեսնուած էր: Այն կրակը, որուն մէջ կը մնային մեր կուսակցականները, վերջապէս նշմարելի էին:

Հետեւաբար ձեռք ձեռքի տալու ժամանակն էր, միանալու ու մէկտեղ գործելու ատենն էր:

Ողձի ու պարտականութեան հրաւերը արձագանգ տուած էր ամեն սրտերու մէջ:

Վանայ նահանգը պաշտպանուած էր, չնայելով որ զինուորական չղթայի տակ առնուած էր ան:

ՎԱՂԳԵՆ

Վաղգէն Արարուց թաղին մէջ տուն մը ապաստա-նած էր երկու տարիներէ ի վեր:

Վաղ փաշա ամեն ջանք, ամեն միջոց եւ ամեն տեսակ ներգալի դուրս լարեց ձեռքակալելու համար

զինքը. բայց, անօգուտ բան, զրեթէ արդիւնքի մը չհասաւ:

Հետեւաբար՝ Առաքել էֆէնտիի անձնապահութեան շարժառիթը խաւարի մը մէջ մնաց...

Միւս կողմէն ատեն, Առաքել էֆէնտիի կինն ալ չէր յայտնած թէ՛ անձնապահ տեսակներ, մեռնելէ առաջ, զրուսթիւն մը թողած էր սեղանին վրայ, որուն մէջ կը խոստովանէր իր մատնիչ մը ըլլալը:

Վերջապէս՝ Այս ոճիւրը՝ տարբեր մեկնութեանց ու տարաձայնութեանց տեղի տալէն ետքը, երթալով մոռացութեան դատապարտուած էր:

Իրեկուն մը Վաղգէնի ապաստանած տունին դուռը կին մը կանգ առաւ ու երկիւղալի զրուսթիւնով մը ձեռք չլսակին տանելով երկու անգամ բաղնից:

Վաղգէնին անցած ծերունի մը դուռը բացաւ ու հարցուց թէ ինչ կուզէր:

— Գիշ մը տեսնուիլ կուզեմ ձեզի հետ, հեծկաաց տարբերութիւնը խղճուելու մօտ ձայնով մը: Արդ-եօք կարելի՞ է...

Գաղտնիք ծածկ ծերունին անգամ մը կնոջ երեսը նայեցաւ, անոր աչքերուն մէջ պահուած գաղտնիքը հասկնալու ուզեց եւ յետոյ մըմօղեց:

— Վեր ելէ՛ք, տիկին, պատրաստ եմ:

Սեւեր հագած կինը, որ քառասունի մօտ տարիք մը ունէր, հիւսիսային առաջնորդուեցաւ:

— Կը խնդրեմ, ջոջ աղա՛, թոթովեց կինը խնայա-ցնող չեղտով մը, ներքեցէ՛ք որ անհանգիստ կընեմ ձեզ:

— Բան մը չէ՛, տիկին... Ի՞նչու անհանգիստ ըլ-

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԵԳԻՅԷ

ԹԻ Ի Ռ Ք Ի Ա

Իզմիրտէն վերելէն մայրամաթա պինան, Իքիննի վէ իւրիննի օր. տուարըն ընտիրելէ թօրանըլը. յօր. Էն եւթսէք ասքերիէ մէճ. լիսի հարպ հաղըղըղը իշին պիր բլան հաղըղըղը տըր. վէ Եու. նան-Թիւրք մուհարէպէսինտէ սէր գօմանտան պուլընան միւշիւր Էթ. հէմ բաշանըն Մաքթոնիա օր. տուսընա գօմանտան թային օլը. նաճաղը միւրէվի տիր.

— Արապիւտանըն Ատէն էլա. լէթի տախիլինտէ թիւրք ասքեր. լէրինտէն իսթիւա օլընմըլ օլան իքի նօգթալարը թէրք իթմէք Ի. չին Պապը Ալի էմր վերմիշ տիր. իշպու էմրիւր ինկիլթէրանըն թա. լէպինէ իքթիֆա վերմիշ օլըյօր.

— Մաքթոնիա իշին Աւստրիա վէ Բուսիա էլիլէրինին թանգիմ իթմիշ օլտուգլարը իսլահաթ ճէտ. վէլի իւզերինէ Բէթրսպուրկ վէ վիէննա գապինէլէրի պէյնինտէ իթթիֆազ հասըլ օլմըլ տըր. Սթանպուլտաքի էլիլէր պու պապ. տէ թէլէկրաֆ պէքլէմէքտէ օլուպ էմիր վիրուտ իթմէսինտէ Պապը Ալիէ միւրաճաթ իտէրէք, մէգ. քիւր ճէտվէլին իճրասընը թալէպ իտէճէլէր.

— Իրէքտէ Արնաւուտար թօր. լանուպ, իսլահաթա գարշը բօ. թէսթ իթմիշլէր. վէ աքսի հալտէ Իրէք շէհրինէ մուհասէրէ իտէ. ճէքլէրինի թէհսիտէն պիւտիրմիշ. լէր.

Արնաւուտարըն շու հարէքթի իւրաղըն թէշիքի իլէ օլտըղը պէշլէքտէքի չօնուգ պիլէ ֆէհմ ի. տէպիլիր.

— Սօն կիւնլէրտէ Մաքթոն. նիանըն միւթէատիտ նօգթալարըն. տա կէօրինմիւշ օլան պուլկար չէ. թէլէրին ամէլիաթընտան տօլալը գօնսօլալար բարօրթլարը իլէ շու. եօլտա պիւտիրիօրլար.

«Օլտիրտտէ 30 քիշիլէք պիր չէ. թէ ասքերլէր իլէ վուրուշուպ 4 քիշի էօլտու, 5ի եա. էլէնտի վէ 17սի թուլթուլու. 2էթէնին իէ. յիսի Բաբախրէսթօ իտի.

«Բէյնա քէօյիւնտէ 50 քիշիլէք պիր չէթէ՝ սապահտան ազլամա գատար ասքերլէրէ գարշը մուգա. վէմէթ իտէրէք, կիճէնին գարան. լըղընտան պիլ իսթիֆատէ, գա. չուպ եագալը գուրթարմայա մու. վաֆազ օլմըլ տըր. Գէօյիլէր տախի չէթէյէ եարտըմտա պուլըն. մըլլար.

Շիմտի վա՛յ օ՛ քէօյիլէրին հալինէ.

«Կիէվինտա պիր չէթէ ասքեր. լէր իլէ վուրուշուպ, ֆագաթ սօն. րա չէթէնին ընյիսի թէսիմ օլմուշ տըր.

«Գրապէթուվատա պիր չէթէ չէ տիտ սուրէթտէ վուրուշտըգտան

սօնրա, գօմիթէլէրտէն խալըսը թէլէֆ օլարապ տիկերլէրի գաշ. մըլլար.

«Մօնասթըր չըմէնտրֆէրինի խաթթտան չըգարմազ էֆքեարը իլէ իքի գօմիթէ ազաւը եօլու գաղըր իքէն, չըմէնտրֆէրտէն է. զիւուպ մահվ օլմուշմար.

«Զօկօրիցա քէօյիւնտէ պիր չա. վուշ վէ իքի գապթիէ գօմիթէ. լէրտէն վուրուլուպ, էօլմիւշլէր».

— Թիւրք հիւքիւմէթի Եու. նա. նիստանա պիր նօթա վիրուպ, գօ. միթէլէրին պիր գըսմը Բիրէա թարիքի իլէ Մաքթոնիայա կէշ. մէքտէ օլտըղընը իսթար վէ Ի. ճապընըն իգթիլգասընը թապսիէ իթմիշ տիր. Պու իսթար իւզէ. ընէ Եու. նան հիւքիւմէթի տախի Մաքթոնիալը թէշիվգիլէրինի թաագիպ իթմէկէ պաշլամըլ տըր.

— Էտիրնէ վիւլլէթիին պուլ. կար սինօրը ճիվարընտա ասքէ. թէճէմմիւ իտիլմէքտէ վէ մուհիւ. մաթ թէտարիգ օլընմագտա օլտը. ղընը Սուլթանա տօսթ օլան մուլ. պիլլէր տախի իթիւրաֆ իտէյօր. լար.

— Սթանպուլ 18 ֆետրվար թա. ըիլի իլէ պիւտիրիլիօր.

«Պուլկարիանըն Մաքթոնիալը գօմիթէլէրէ գարշը էլէ ալտըղը թէտպիլլէրտէն Պապը Ալի մէմ. նուն օլտը իսէտէ, անրն ճիտտի սուրէթտէ տէվաթ իտիլմէկէլինտէն շիւրհէլէնմէքտէ օլտըղընտան, Իհ. թիւթլը տապիւնմըլ օլմագ իշին, թէտապիրի ասքերիլէսինի թէրք իթմէյէճէք կէրինիօր».

Պու. նունլէ պէրապէր, Սթանպուլտան թիւրք տախիլէրինտէն նէշաթ ի. տէն թէլէկրաֆլար ասքերիէ հա. ղըրըղընը ինքեար վէ թէքիպ իթմէքտէ տիրլէր.

— Էլէկրիէ գատար եագըլաճագ եէնի չըմէնտրֆէր խաթթը 200 քիլօմէթրօ գատար օլուպ, Իսթա. ճագ օլան գուլմաննա սէնէվի 5 միլիոն ֆր. իշին թէմիւթ իսթէ. միշ իտի. Մէճիսի վիւքէլա Գօն. եա վիւլլէթիին աշալս վարիտա. թընը թէմիւթ կէօսթէրմիշ վէ մաղպաթալը Սուլթ. սնըն թաօտի. գինէ իհալէ իթմիշ տիր.

ԻՆԿԻԼԹԷՐԱ

Ինկիլիզ Բաշլըմանը Գրալըն շու մաալտա պիր նութգը իլէ քիւշտա օլընտը.

«Շարգտա սուլհըն իսլալընտան գօրգուվագտա տըր.

«Մաքթոնիատա ճիտտի իսլա. հաթըն էշէտտի իւզիւմի օլտըղընը Սուլթանա վէ քէնտի նաղըրլարընա իսթար իթմիշլի.

«Իճրասը լաղըմ կէլէն իսլահաթ ճէտպիլ իշին Բուսիա վէ Աւըս. տրիա պէրինտէ իթիւաֆ հասըլ օլմուշ օլուպ, պիւա թէլիսի իճ. րաօր պապընտա, Պէրլին ահտա. մէսինի իմզալամըլ օլան տէօվէթ. լէր թարաֆընտան ճէտվէլ Սուլթա. նա թէպիլղ օլընմագ տըր».

Մէզքիւր ճէտվէլին միւնտերի. ճաթը քեաֆի տէրէճէտէ օլտըղընը վէ մէզքիւր իքի տէօվէթէ էմի. լէթի քեաթիլէսի պուլընտըղընը վէ էգհէր ճիհէթ անլէրին թալէպլէ. ընէ գուվէթ վէրէճէկիին Գրալ. պէյան իթտի.

ՖՐԱՆՍԱ

Կէշէն բագար կիւնիւ Բարիզին Շաթօ տ՝Օ սալօնընտա պէշ պինի միւթէճագիլ էշալի պիլէթլէ թօրլանմըլ վէ պուլըն պիր գաշ միսի տախի սալօնըն էթրաֆընտա պիրիքմիշ իտի.

Էրմէնիստան վէ Մաքթոնիա լէհինտէ թէշիլ օլընան պու մի. թիւք՝ ընյիս տ՝Էսթիւրնէլ տը Գօնս. թաճըն պիր պէլիղ նուլթ իլէ ա. չըլտը. վէ Մ. Ս. Ժօրէս, Լըրօլ, Տընի Գօշէն վէ տը Բրէսանսէ ալըր ալըր նուլթգլարլէ թիւրք հիւքիւ. մէթին ղատտարլըղընը, Էրմէնի վէ Մաքթոնիալը իսթիսթիւանլարըն սէֆալլէթ ու բէրիշանիլէթիին ահտ. նամէլլէրլէ Էվրոգա տէօվէթլէրի. նին մէսուլիլէթիին վէ վաղիֆէլէրի. նի նագշ ու թաաւտա էլլէտիլէր.

Նիհալէթ՝ Մ. տը Բրէսանսէ Շարգ իշին Էվրոգա տիւրօմաթ. լարընա շու աթիտէքի մէպտէլէր իւ. ղէրինէ պիր բօկրաւ թէքիլֆ իթտի.

1) Մաքթոնիա մէսէլէսինտէն ապա. էրմէնի մէսէլէսինի ալըրմամագ.

2) Գապուլ օլընմըլ օլանլարը եանի վատ օլընան, իսլահաթլարը ունուլթ. մամագ.

3) Իսլահաթըն իճրասընը եալընը Սուլթանա պըրագմամագ, իլլա անը պիր էվրոգալը գօմիսիօնըն գօնթօլը ալթընա գօյմագ.

Նիհալէթ Էրմէնիստան վէ Մաքթ. թոնիա իշին տախի 1881տէ Շարգ. Բուլմէլիտէ թէշիլ օլընան իտարէթ թէրթիպ իթմէք.

Մ. տը Բրէսանսէ նուլթընա տէվամլէ, «Թիւրքիատա շու իս. լահաթը իճրա իթտիրմէք իշին իլք տաթըլ Զրանսա աթմալը տըր վէ տէօվէթլէրին իթթիֆազ իթ. մէսինէ պէքլէմէք իգթիլգա իթ. մէշ» տէտի.

Միթիլին միւթթէֆիգէն վէր. տիկի սօն գարարը իլք սահիֆէ. միլտէ տէրճ իթիլիլէ.

ԻԹԱԼԻԱ

Իթալիա մէճիսի մէպուսանըն. տա պիր իսթիսթագա ճէվապէն, խարիճիէ միւթթէշարը Պալգան գարըշըրլարընտան տօլալը շու մաալտա պէյանը էֆքեար էլլէտի. «Պալգան վուգուլթլարընա տա. իմի սուրէթտէ տըղգաթ իթմէք. տէիլ, իթալիա՝ տիկիլ տէօվէթ. լէր իլէ՝ գանմըլ տըր քի մէսէլէ. նին հալլի սրաքոն քօնըն մուհա. ֆագաթ իլէ միւթթին օլուր, վէ պու մէպտէ իւզրէ հարէքթի իթ. միշ տիր.

«Գօնթ Լամտօրֆըն սօն եօլ. ճըլըղը տախի, սրաքոն քօնըն մուհաֆագաթընա միւնէլը օլմուշ

օլտըղընը մէսէրլէթլէ տուլտուգ. «Պէրլին ահտանմէսինի իմզա. լամըլ օլան տէօվէթլէր պէյնինտէ իթթիֆազ հասըլ օլմաալտա պիլգ. ղիյատէսի իլէ մէսուրը օլաճաղըղ. ղիրա Սրաքոն-քօնըն մուհաֆագա. սը վէ թիւրքիատա իսլահաթ իճրասը մէզքիւր իթթիֆագլէ միւթթին օլուր.

ՎԷՆԷՑՈՒԼԱ

Իշ պէօյիւք տէօվէթլէր վէ վէ. նէցուլլա հիւքիւմէթի պէյնինտէ ճարի օլան մուհաֆագալա խիթամ վէրէճէք օլան մուգալէնամէլէր թարաֆէյնտէն իմզալանմըլ օլտը. ղընտան, վէնէցուլլա սահիլլէրի. նի իհաթէ իտէն տէօվէթլէրին հարպ սէֆիլէրի կէրի չէքիլտի. լէր, վէ պուլլարըն թուլթմուշ. օլտուգլարը վէնէցուլլա վարօրլարը սէրպէսթ պըրագըլտըրար. Շու մուհասէրէտէն տօլալը վէնէցուլ. լա էլալէթիինտէ գըթլըգ պաշա. մըլ ըտը, մէքուլթըն ֆիյաթը իքի գաթ արթմըլ ըտը. Դարա. գաստա սօն 8 կիսն վարֆընտա հիշ էքմէք գալմամըլ ըտը.

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Մաքթոնիա գօմիթէլէրին լաղըն. տան տօլալը Պապը Ալի Պուլկարիա գապինէսինէ մէմուրնէլթ պէյան իթ. տի.

Սուլթան տախի խաթթը՝ տէսթի իլէ պիր, մէքթուպլէ Զիլսամ. Բրէնս Զէրտինանտա թէշէթիւրաթընը պէյան էլլէտի.

— Ալմանիա տէօվէթի իսլահաթ ճէտվէլինի թէտգըգ իտուպ, անըն իճրասը իշին Սթանպուլտաքի Բուս վէ Աւստրիա էլիլէրինին թալէպինէ գուվէթ վէրմէք պապընտա քէնտի էրիսինէ էմր վէրմիշ տիր.

— Քէզա Զրանսա էլիսինին պու պապտէ Բարիստէն էմր ալմըլ օլտը. ղընը Սթանպուլտան պիւտիրիլար.

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ

ՎԱՌՆԱ, 8 Փետրուար

ԶԱՌԻԻԷ

ՊՈՒՂՏՈՅ	
Վալոն Լիպ. 57-58 հքթ. 9.20/ 9.60	Արապա Լիպ. 53-62 հքթ. 9. —/ 10.40
ԱՐԱՍ	
Վալոն 100 քիլո 9.80/ 10.10	Արապա 45-50 Լիպ. հքթ. 6. —/ 6.40
ԶԱՎՏԱՐ	
Վալոն 53 54 Լիպ. 7.40/ 7.80	Արապա 8. —/ 8.40
ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիլո	
ԵՈՒԼԱՅ	
Վալոն 100 քիլո 10.20/ 10.60	Արապա հէքթ. 5.40/ 5.50
ՄԻՍԻՐ	
Վալոն Լիպ. 56-57 հէք. 8. —/ 8.05	Արապա Լիպ. 56-57 հքթ. 7.80/ 8.20
ՏԱՐԸ	
Վալոն 100 քիլո 9.60/ 10. —	Վալոն մուամէլէսի ալթուրն ֆը. րանքլէ, արապա կիւմիւշլէ, Նար. լէօն 20.50 ֆրանք.

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна